ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆ ԱՎԱՐՏԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՀՈՍՔԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՁՆԵԼ ԵՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

08.04.2014 13:26

Այսօր՝ 2014 թվականի ապրիլի 8-ին, կազմակերպվել էր Փաստաբանական դպրոցի ավարտական երկրորդ հոսքի որակավարման քննությունները, որին մասնակցել են թվով 63 հավակնորդներ: Դպրոցի շրջանավարտները քննություն են հանձնել փաստաբանի վարքագծի կանոնագրքի (դեոնթոլոգիա) մոդուլից:

Որակավորման քննությունն անցկացնում էր ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը, ի դեմս հանձնաժողովի նախագահ Արա Ջոհրաբյանի, և ներկա մյուս անդամներ՝ փաստաբաններ Սեդրակ Ասատրյանի, Արսեն Սարդարյանի, Հունան Տեր-Վարդանյանի, Մանե Կարապետյանի, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արման Թաթոյանի:

Հավակնորդները համապատասխան տարայից հանում էին իրենց սեղանի համարը, այնուհետև գրանցվում:

Գրանցվելուց հետո Հանձնաժողովի նախագահը բոլորի ներկայությամբ (հետևում էին պատի վրա կախված մեծ էկրանով) համակարգչում ստեղծել է ծածկագրերի բազա, որը տպագրվել և հեռացվել է համակարգչից: Ծածկագրերի այն օրինակը, որից կարելի էր բացահայտել հավակնորդներին, տեղադրվել է կնքված արկղում, իսկ մյուս տարբերակը, որի վրա միայն շտրիխ կոդն էր, հանձնվել է հանձնաժողովի անդամներին:

Քննության ժամանակ տրամադրվել էր դեոնթոլոգիայի 4 խնդիր: Հավակնորդները պետք է որոշեին կար արդյոք վարքագծի կանոնագրքի խախտում, թե՝ ոչ և հիմնավորեին իրենց պատասխանը: Աշխատանքն ավարտվելուց հետո, հավակնորդը տպում էր այն 2 օրինակից, որից մեկի վրա փակցվում էր շտրիխ կոդը և հանձնվում հանձնաժողովի անդամին, իսկ մյուս տարբերակի վրա հավակնորդը ստորագրում էր և իր ձեռքով տեղադրում էր կնքված արկղում:

Այդ արկղը բացվելու է միայն քննությունների արդյունքները հրապարակելու ժամանակ:

Որակավորման հանձնաժողովը գնահատելու է շտրիխ կոդի վերծանման արդյունքում հայտնի դարձած թվանշանով աշխատանքը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը լրատվամիջոցների հետ իր խոսքում հայտնել է, որ գոհ է դպրոցի առաջին հոսքի որակական հատկանիշներից, սակայն փորձում են որակի հարցում ինքնաքննադատական մոտեցում դրսևորել- «**Փաստաբանական դպրոցը որակապես**

մենք վերազինել ենք, այսինքն՝ էլ ավելի ենք որակը բարձրացնելու։ Համեմատական կարգով ավելի որակյալ կադրեր ենք ունենում, քան առաջ’:
Նախկինում իրավաբանները քննություն էին հանձնում ու միանգամից դառնում էին փաստաբան, հիմա՝ պետք է մեկ անգամ ընդունվեն դպրոց, մեկ տարի սովորեն։ Ի դեպ, քանակական իմաստով մենք դեռ աճելու տեղ ունենք։ Բնակչության թվով մենք կարող ենք 3 անգամ աճել։ Այժմ ունենք 1430 փաստաբան, որոնցից մեր հաշվարկներով ակտիվ են մոտ 800-ը»:
Արա Զոհրաբյանը կարևորել է փաստաբանի կողմից վարքագծի կանոնագրքի յուրացումը. «**Շատ կարևոր է, որ փաստաբանն իմանա խաղի կանոնները, որը թույլ կտա նրան զերծ պահել կոռուպցիոն ճանապարհներով գնալուց**»:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })